ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 18 - Ա
23 հունվարի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6 - Ի N 8 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի մարտի 6-ի <<Մարզային ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մայիսի 17-ի N 38 – Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 8–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) կարգադրության վերնագրում <<մարզային>> բառից առաջ լրացնել <<քաղաքացիական պաշտպանության>> բառերը.

2) կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<1. Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր նշանակել՝

Հովհաննիսյան Դ. – ինժեներական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Հովհաննիսյան Վ. - բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մուշեղյան Յու. – նյութատեխնիկական մատակարարման, սննդի և առևտրի ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ

Ադամյան Ա. - հասարակական կարգի պահպանության ծառայության պետ, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ

Այվազյան Մ. - բժշկական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ

Խաչատրյան Գ. - տրանսպորտային ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Բիձյան Հ. - կոմունալ տեխնիկական և բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի վարիչ

Հայրապետյան Ա - կապի և ազդարարման ծառայության պետ, <<Արմենթել>> ՓԲԸ արևելյան տարածքային կենտրոնի Գավառ-Սևան ուղղության ղեկավար

Պողոսյան Ա. - էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ, <<Հայ ԷՑ>> փակ բաժնետիրական ընկերության <<Գեղամա>> մասնաճյուղի գլխավոր ճարտարապետ>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ